ողջոյն ուղերձէ, հանդերձ հարբ առ ձեզ, նմին իրի ողջոյն հնազանդական իշխանուհի և մեծապատիւ ամուսնոյդ նուիրէ, և առողջութիւն անձանցդ ի տեառնէ ժամէ, յուսալով միշտ երջանիկ և ուրախ լիջիք ի տէր առ ի փառս և ի պարծանս մեր։ Ամէն։

Ի Կալկաթայ 1791 դեկտեմբերի 24. Երկրորդ օրինակ

Նու[աստ] ծ[առայ] էմին Յովսէփայ
էմինեանց։

Մախթեմ ի վաղեմի բարեկամական սիրոյ քումմէ, զի մի տաղտկացեալ (մեկ բառ անընթեռնելի—Վ. Գ.) տասցիս ի յընթեռնուլ ձեր զբազմասխալ թուղթս այս, չհաշուելով փքացումն ինչ եղեալ յինէն, այլ զհաւելուած պարզամիտ անշիջանելի եռանդոտն սրտի։ Ըստ որում յաւելուած սրտի խօսի զյեզու։ Ահա աստէն ի կարծիս անկեալ ասասցես՝ զի՞նչ կամի այրս այս յինէն, և ժպտալով թէ ոչ դադարի զճառատանս գրելով առ իս, ըստ ասելոյ Կոռնէլիոս Կաղղոսին, զորս տեսանի ի ճարտասանութեան հայր Ստեփաննոսին։

Վաստակ լինի ունկն դիրքն ի լսել.
Ոչ վաստակի՝ քաջ ծերունին ի խօսել,
Ո՞վ ծերունի, յամենայնի ապիկար,
Ի ճառատանս միայն յաջող և յօժար։

Պատասխանեմ և ընդունեմ զթերութիւնս այս, որ յիս սակայն փորձեայ մի անգամ և փորձեսցէն այնք, որք այդպէս կարծէն, ստասջիր հրօվարտակ, կնքեալ կնքով ամենափայլ կայսէրուհւոյն վասն իմ, թէպէտ վաթսուն և հինգ ամաց ծէրացեալ այր մի եմ, բայց շնհորոք Տեառն մանկագոյն եմ, քան երիտասարդս։ Եթէ ոչ հաւասարիցի գործ իմ ասութեան իմոյ, ստայօդ յորջորջեսցէն զանուն իմ, և զբանն իմաստնոյն կատարեսցի ի վերայ իմ։ Ըստ հոգերգողին. «Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից զգործս Տեառն։

Ի թուին 1792 յամսեան յունվարի մեկ

Ն[ուաստ] ծ[առայ] է[մին] էմինեանց։

*Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան,*
*ձեռ. № 694, փաստաթուղթ ԺԸ։*

## ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովհաննես Եղիազարյանը XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ակտիվ մասնակից, ազգային բարերար Հովհաննես Աղազարի Լազարյանն էր (1735—1801 թթ.)։

2. Հ. Լազարյանի միջոցներով Պետերբուրգում, Նևսկի պողոտայի վրա կառուցված հայկական Ս. Կատարինե եկեղեցին օծվել է ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արզումյանի ձեռքով 1780 թ. փետրվարի 18-ին։

3. Այս նամակը դեռ էմինին չէր հասել, երբ 1791 թ. հոկտեմբերի 5-ին, Ցաշում, Թուրքերի հետ խաղաղ բանակցություններ վարելու ժամանակ, ծանր հիվանդանում և մեռնում է ռուս նշանավոր պետական ու ռազմական գործիչ, գեներալ-ֆելդմարշալ Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինը (ծնվ. 1739 թ.)։

4. Թիֆլիսեցի Ստեփան քահանան (Ստեփաննոս Տեր-Հարությունյանը) Նոր Նախիջևանի քահանաներից էր, որին նվիրակի հանգամանքով Հ. Արղությանը 1786 թ. ուղարկել էր Հընդկաստան։ Ըստ Հ. Արղությանի հրահանգի, նա մեկնելու էր Կ. Պոլսի և Բասրայի վրայով